

ԳԼՈՒԽ ԻԸ ՀԻՆ ԴԱԲԱՃԱՆ ՄԸ

Իսկ ինք Գուրգեն իբրեւ իւր վրայ ստանձնեալ՝ օտարին հարստահարութեանց պատուհասը, Վասպուրական, Տարօն, Ապահունիք եւ Անձեւացիք եւ մինչեւ հարզն ի սահմանս Յունաց կը շրջէր, սարսափ բռնաւորաց եւ մխիթարութիւն ժողովրդաց:

Երբ այս հեռաւոր շրջագայութեանց դարձած Մարդաստան՝ իւր հայրենի գաւառը կը հանգչէր, յանկարծ խոսրովու գալուստն հրէն իմացուցին:

Մեծ ուրախութիւն էր Գուրգենի հին եւ ազնիւ բարեկամին այցելութիւնը, եւ իւր ուրախութիւնը կրկնապատկեցաւ, երբ խոսրովու զուարթ երեսը տեսաւ: Ընթրեցին, խօսեցան զանազան նիւթերու վրայ, ուր մանաւանդ Բագրատունուոյն Աշոտոյ խորագէտ քաղաքականութիւնը քննութեան առիթ տուաւ իրենց: Եւ երբ ամենքը քաշուեցան, եւ միայն այս երկու բարեկամք մնացին, խոսրով յանկարծ իբրեւ քունէ արթնցած՝

— Բուն իմ գալստեանս գլխաւոր նպատակը քեզի յայտնելու չի մոռցայ՝ այլ դանդաղեցայ, Գուրգեն,— ըսաւ խոսրով եւ հանեց կնքեալ թուղթ մը տուաւ:

Գուրգեն նամակը ձեռքն առաւ եւ երեսին գոյնը դարձաւ.

— Յեղինէի գիրն է,— ըսաւ, եւ փոխանակ բանալու խոսրովու երեսը կը նայէր:

— Բա՛ց, կարդա՛յ, ո՛ւմ կը սպասես:

«Յեղինէ, Անձեւացեաց Տիկին առ Գուրգեն Արծրունի, իշխան Մարդաստանի»: Այս տողերը կարդալուն՝ կորովի մարդուն ձեռքերը կը դողային, առաջին անգամն էր, որ տասնմէկ տարի վերջ Յեղինէ իրեն կը գրէր, եւ այնպիսի մարդու ձեռք կ'ուղարկէր իր նամակը: